ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-19/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան

«10» հուլիսի 2019թ.

2019թ-ի հուլիսի 10-ին՝ ժամը 12:00-ին, «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48/1 , «Սախարով» բիզնես կենտրոնում, տեղի ունեցավ **ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-19/2** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Արմեն	Խաչատրյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ գլխավոր իրավաբան-իրավական խորհրդատվության և հայտերի կարգավորման վարչության պետ.
Մարիանա	Վասիլյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ հաճախորդների սպասարկման մասնագետ.
Վահան	Ղարիբյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ հաճախորդների սպասարկման բաժնի պետ.
Նարեկ	Գրիգորյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ տնտեսվար-վարորդ"
Լիլիթ	Վարոսյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ գլխավոր հաշվապահ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Արմեն Խաչատրյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

ՕՐԱԿԱՐԳ

1. **ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-19/2** ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. **ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-19/2** ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-19/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ հայտնելով, որ Ֆ/Ա Անի Հախվերդյանի կողմից ներկայացվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որը ներկայացվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. **ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-19/2** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած Ֆ/Ա Անի Հախվերդյանի որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին:

Որոշվեց՝

1. Տիրան Լաճիկյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Հաստատել **ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-19/2** ծածկագրով գնմանն ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

1) Ֆ/Ա Անի Հախվերդյան՝ բավարար:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-19/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. **ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-19/2** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել Ֆ/Ա Անի Հախվերդյանին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Խաչատրյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Մ. Վասիլյան _____

Վ. Ղարիբյան _____

Ն. Գրիգորյան _____

Լ. Վարոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան